

ՌՈՍԻԿ ՆԱԻՐԻԻ ԶԱՐՅԱՆ
(ծննդյան 90-ամյակին)
(1932-1992)



2022թ. լրացավ երկրաբանա-միներալոգիական գիտությունների դոկտոր, հայտնի երկրաքիմիկոս Ռոմիկ Նաիրիի Զարյանի (28.01.1932թ. – 16.06.1992թ.) 90-ամյակը: Նա ծնվել է մեծացել է հանրաճանաչ գրող Նաիրի Զարյանի ընտանիքում: 1955թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը: 1955-1958թթ. ներառյալ աշխատել է որպես երկրաբան ՀԽՍՀ երկրաբանական վարչության տարբեր երկրաբանահետախուզական արշավախմբերում: 1958թ. ղեկավարել է ընդունվել է ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի Երկրաբանական

գիտությունների ինստիտուտի արտադրությունից կտրված ասպիրանտուրա: 1961թ.-ից մինչև իր կյանքի վերջին օրերը աշխատել է նույն ինստիտուտում՝ սկզբում որպես կրտսեր, իսկ 1967թ.-ից ավագ գիտաշխատող ինստիտուտի երկրաքիմիայի բաժնում: 1965թ. Մոսկվայում ԽՍՀՄ ԳԱ Վ. Վերնանդսկու անվան երկրաքիմիայի և անալիտիկ քիմիայի գիտահետազոտական ինստիտուտի (ГЕОХИ АН СССР) գիտական խորհրդում, հռչակավոր երկրաքիմիկոս երկրաբանա-միներալոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ.Վ. Շչերբինայի գիտական ղեկավարությամբ փայլուն կերպով պաշտպանել է «Հայկական ԽՍՀ Կապանի և Քաջարանի հանքավայրերի հանքանյութերում սելենի և թելուրի տարածման օրինաչափությունները» թեմայով թեկնածուական ատենախոսությունը և ստացել երկրաբանա-միներալոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Հետագայում՝ իր ամբողջ գիտական կյանքի ընթացքում, Ռ. Զարյանը զբաղվել է Հայաստանի Կապանի շրջանի մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի հանքանյութերում առկա ցրված և հազվագյուտ տարրերի, երկրաքիմիական և պետրոքիմիական առանձնահատկությունների, ինչպես նաև նրանց տարածական տեղաբաշխման հարցերով: Մասնավորապես, Կապանի պղինձ-հրաքարային հանքավայրում նրա կողմից ուսումնասիրվել են թելուրիտները և առաջին անգամ բացահայտվել են հեպիտ՝ Ag_2Te և թելուրոքիսմոտիտ՝ Bi_2Te_3 , միներալները: Այս հանքավայրի սֆալերիտ և գալենիտ պարունակող հանքանյութերում նա առաջին անգամ Հայաստանի տարածքում բացահայտել է կապարի թելուրիտի հազվագյուտ միներալ

դանհեմիտ $PbTeO_4$, որը մինչ այդ հայտնաբերվել և առաջին անգամ նկարագրվել էր անգլիացի միներալոգ Դանհեմի կողմից 1935թ. ԱՄՆ Նյու Մեքսիկո նահանգում: Ռ. Ջարյանին հաջողվել է բացահայտել, որ Կապանի հանքավայրի հանքանյութում հազվագյուտ և ցրված տարրերը կենտրոնացված են հիմնականում սֆալերիտ, գալենիտ, պիրիտ միներալներում: Ընդ որում, գալիումի և ինդիումի ամենաբարձր պարունակությունը՝ 0.001%-0.1%, նկատվում է սֆալերիտում, թալիումինը՝ մինչև 0.002%, գալենիտում, իսկ կադմիումինը՝ մինչև 1%, կլեյտֆանում: Գիտնականի կողմից հազվագյուտ և ցրված մետաղներ են հայտնաբերվել նաև Սյունիքի Ծավի պղինձ-մոլիբդենային և Շիկահողի պղինձ-հրաքարային երևակումներում: Ապացուցվել է, որ այստեղ բացի մոլիբդենից, պղնձից, ցինկից, կապարից և ոսկուց, ոչ մեծ քանակությամբ առկա են նաև սելենը, թելուրը, գալիումը, ռենիումը և գերմանիումը: Վերջին տարրի պարունակությունը աստիճանաբար ավելանում է մոլիբդենիտ-պիրիտ-խալկոպիրիտ-մագնետիտ միներալային հաջորդականությամբ: Գալիումի առավել բարձր պարունակությունը նկատվում է խալկոպիրիտում, իսկ ռենիումը խալկոպիրիտում և բորնիտում՝ մինչև 0.0002%: Գիտնականը ուսումնասիրել է նաև Վայոց Ձորի Գլաձորի բազմամետաղային (կապար-ցինկ) հանքավայրի կենտրոնական հատվածի Կորեկիձորի (Թեքսարի կառուցվածքաֆազիալ գոտի) հազվագյուտ և ցրված տարրերի երկրաքիմիան և բաշխվածության օրինաչափությունները: 1987թ. Ա.Ա. Տվալչրելիձեի անվան միներալային հումքի Կովկասյան ինստիտուտի (Թբիլիսի) գիտական խորհրդում Ռ. Ջարյանը պաշտպանել է «Փոքր Կովկասի Կապան-Ջանգեզուրի հանքաքեր մարզի հիդրոթերմալ հանքավայրերը» դոկտորական ատենախոսությունը և արժանացել երկրաբանա-միներալոգիական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի: Այս աշխատանքում ընդհանրացվել են Ռ. Ջարյանի երկարամյա գիտական հետազոտությունների արդյունքները երկրաքիմիայի և պետրոքիմիայի ասպարեզներում, տրվել են որոշ հանքայնացումների կանխատեսումային գնահատականները: Մասնավորապես, Քաջարանի պղինձ-մոլիբդենային հանքավայրի համար առավել հեռանկարայինը նրա հյուսիսային և հյուսիս-արևմտյան թևերն են, Ագարակի պղինձ-մոլիբդենային հանքավայրի համար հյուսիսային հատվածը, իսկ Կապանի պղինձ-հրաքարային և Շահումյանի բազմամետաղային հանքավայրերի համար՝ հյուսիս-արևմտյան և հարավ-արևելյան հատվածների խորքային հորիզոնները: Ռ. Ջարյանը հեղինակ և համահեղինակ է 35 գիտական հրատարակումների, այդ թվում՝ 2 մենագրության (համահեղինակությամբ), 23 հոդվածի, 13 թեզիսի, ինչպես նաև 12 ձեռագիր հաշվետվություն: Նրա համահեղինակների թվում են հանրահայտ մասնագետներ ակադեմիկոսներ Հ. Մաղաքյանը և Ա. Կարապետյանը, պրոֆ. Վ. Շչերբինան, գիտ. դոկտորներ Գ. Փիջյանը, Շ. Ամիրյանը, Է. Խաչատուրյանը, Բ. Մելիքսեթյանը և այլոք:

Հայկ Մելիք-Ադամյան